

ԻՐԱՆԻ ՄԻՋՆՈՐԳԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (1992 թ. փետրվար - մայիս)

ՏԻԳՐԱՆ ԲԱԼԱՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հակամարտությունը դեռևս իր սկզբանական փուլում խնդիրներ առաջացրեց Իրանի արտաքին և ներքին քաղաքականության համար: Այն առավել սուր դրվեց ԽՍՀՄ փլուզումից հետո՝ Ադրբեջանի անկախացմամբ և Ղարաբաղյան Հակամարտության գոտում ռազմական գործողությունների ուժեղացմամբ: Իրանը սկսեց վարել բավականին ճկուն և կռադատված քաղաքականություն, որն ուղղված էր Հայաստանի հետ բարեկամական կապերի ստեղծմանն ու պահպանմանը: Երկրի Հասարակական կարծիքը, սակայն, պահանջում էր, որպեսզի Իրանն օգնի Ադրբեջանին Հայաստանի դեմ պայքարում: Իրանական որոշ շրջաններ պնդում էին, որ կովկասյան տարածաշրջանը պատմականորեն պատկանել է Իրանին, որն այն կորցրել է Ռուսաստանի հզորացման և կայսերապետական նկրտումների հետևանքով, և հիմա ժամանակն է, որպեսզի Իրանը վերադարձնի այդ տարածքները, և Իրանական կառավարությունը Ադրբեջանի քաղաքացիների ճակատագիրը պետք է մտահոգի նույն չափով, ինչպես իր սեփական քաղաքացիներին: Այսպիսի պնդումների վրա օրինակ կարող է ծառայել հետևյալ մեջբերումը՝ «Երբ Կովկասի Հայերը, վրացիները, ինչպես նաև արևացիները, ադրբեջանցիներն ու տարածաշրջանի այլ մահաբեղականները գետակցեն, որ Իրանից իրենց անջատումը թշնամական գործողությունների արդյունք է, նրանք անկասկած կեզրակացնեն (ինչպես արդեն եզրակացրել են նրանց գիտնականները շատերը), որ մշակութային կամ քաղաքական, տնտեսական կամ կրոնական ոչ մի գործոն կամ յուրահատկություն չի նպաստել Իրանից նրանց անջատվելուն: Անջատումը կարելի է բացատրել միմիայն Ցարական Ռուսաստանի կայսերապետական բնույթով, որն իրեն է ենթարկել Իրանի Հյուսիսային մասերը երկարատեւ պատերազմներից հետո և ամրագրել իր գրավումները պայմանագրեր պարտադրելով»:

Ղարաբաղյան Հարցում Իրանի թյուրքալեզու շրջանակներն ավելի ուժեղ ճնշում էին գործադրում կառավարության վրա, քան Իրանական ազգայնական խմբավորումները: Լաչինի ազատագրումից հետո Իրանի թյուրքալեզու ամենամեծ քաղաքում՝ Թավրիզում, թուրքերը տարածվեցին՝ պայքարող ադրբեջանցիներին օգնության հասնելու կոչերով:

Իրանի Հյուսիսային սահմաններում իրադրության կտրուկ փոփոխման պայմաններում Իրանը չէր կարող մի կողմ մնալ մեծ աշխարհաքաղաքական խաղերի մեջ ներքաշվելուց, քանի որ վտանգվում էին Իրանի անմիջական շահերը: Ղարաբաղյան հիմնախնդրում Իրանի և Ռուսաստանի շահերը ինչ-որ տեղ կարելի է միասնական համարել, քանի որ երկու երկրների ազգային շահերը այդ պահին հիմնականում համընկնում էին՝ հետապնդելով հիմնականում երկու նպատակ.

- 1) խոչընդոտել արևմտյան և թուրքական ազդեցության տարածմանը Կովկասում.
- 2) կանխարգելել բռնությունները և ռազմական գործողությունները:

Իրանը հանդես էր գալիս որպես ճանաչված միջազգային սահմանների անխախտելիության կողմնակից: Իրանն, օրինակ, ծանրակշիռ չէր համարում պատմական փաստերի վրա հիմնված տարածքային պահանջները. նման պահանջներն ու փաստարկները կհանգեցնեն տարածաշրջանում անվերջանալի Հակամար-

տությունների:
 Խորհրդային Միության փլուզումից հետո Հակամարտության Իրանի խառնվելը կարելի է բացատրել նաև այլ գործոններով. ինչպես, օրինակ, իր սահմաններում Հակամարտությունների տարածումը կանխելու նպատակով (դեռևս մինչև ԽՍՀՄ փլուզումը Իրանական իշխանությունները մտահոգված էին սահմանի այն կողմում ապրող «հարազատներին տեսնելու» պատրվակով Իրանի սահմանը ապօրինի խախտող ադրբեջանցիներով): Որպես տարածաշրջանային պետություն Իրանը պետք է ցույց տար իր հնարավորությունը վարելու այնպիսի արտաքին քաղաքականություն, որը կհամապատասխաներ առաջ եկած պայմաններին և սպառնալիքներին: Իրանի իշխանությունների կարծիքով, իրենց միջնորդությունը և դրա հաջողությունը բնական էր, քանի որ, ըստ նրանց, թե Ադրբեջանում, թե Հայաստանում նույնիսկ քաղաքական ընդդիմությունը վստահություն էր տալիս, այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Բավական է հիշել այն ժամանակ Ադրբեջանում ընդդիմություն հանդիսացող «Ազգային ճակատի» ոչ բարիացակամ դիրքորոշումը Իրանի հանդեպ և էլջիբեյի Հակաիրանական քաղաքականությունը իշխանության գալուց հետո:

Ակներև է, որ իր միջնորդական նախաձեռնությամբ Իրանն առաջնորդվում էր առաջին հերթին իր անվտանգությունն ապահովելու տեսանկյունից, սակայն հետագայում էր նաև այլ նպատակ, այն է՝ իսլամի արտահանում աշխարհաքաղաքական ազդեցության տարածման հեռանկարով: Այս սկզբունքը ձևակերպել էր դեռևս 1979 թ. Իրանական հեղափոխության առաջնորդ Ալլաթոլայ հոմեյնին⁶: Եվ Իրանի ներգրավումը զարաբաղյան հիմնախնդրում, մեր կարծիքով, հարկավոր է դիտարկել նաև այս գերիմոգրի շրջանակներում նաև:

Ելնելով վերը նշվածից, Իրանի միջնորդական նախաձեռնության նպատակները զարաբաղյան Հակամարտության կարգավորման գործընթացում կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

- Հակամարտության արագ հանգուցալուծում՝ նախենառաջ անվտանգության նկատառումներով: Իրանի սահմանների երկայնքով ռազմական գործողություններն անմիջական վտանգ են ներկայացնում ինչպես արտաքին, այնպես էլ ներքին տեսանկյունից՝ Հաշվի առնելով Իրանի էթնիկ առումով ոչ միատարր բնակչությունը: 1992 թ. Իրանն արդեն ապաստան էր տվել Աֆղանստանից և Իրաքից մոտ մեկ միլիոն փախստականներին⁷: Իրանի իշխանությունները մեծ ջանքեր էին գործադրել, որպեսզի 1993 թ. սեպտեմբերին, զարաբաղյան գործառնությունների կողմից ԼՂՀ Հարավային սահմանների մոտ գտնվող ադրբեջանական կրակակետերը լռեցնելուց հետո, կանխեն ադրբեջանցի փախստականների հոսքն Իրան:

- Իրանի աշխարհաքաղաքական շահերի տեսանկյունից ձեռնառն չէր ոչ Հաղթած Ադրբեջանի, և ոչ էլ Հաղթած Հայաստանի գոյությունը, քանի որ երկու պետություններն էլ հզորանալու դեպքում ռազմավարական ստույգ կարող էին անցանկալի դեր խաղալ Իրանի համար. Ադրբեջանը Թուրքիայի հետ իր մտերմության պատճառով, Հայաստանը՝ Ռուսաստանի դաշնակից լինելու հանգամանքով: Հետևապես Իրանի քաղաքականության նպատակն էր պահպանել ուժերի Հավասարակշռությունը:

- Ռուսաստանի և Ղազախստանի նախադահների միջնոր-

դական անհատի առաքելությունից հետո, Իրանի Հանրապետության այդ ասպարեզում գրալիտերեն կրթությունը այդ երկրի հեղինակությունն ու ազդեցությունը ոչ միայն տարածաշրջանում, այլև աշխարհում:

Դեռևս 1991 թ. նոյեմբերին, ԽՍՀՄ դուրսից օրոք, Թուրքիան ճանաչեց Ադրբեջանի անկախությունը, իսկ վարչապետ Սուլեյման Դեմիրելը Հայտարարեց, որ Թուրքիան մտադիր է բարձր ինտենսիվությամբ զարգացնել Հարաբերությունները նորանկախ թյուրքալեզու պետությունների հետ⁸: Իրանը ճանաչեց Ադրբեջանի անկախությունը Թուրքիայից մեկ ամիս անց: Մեր կարծիքով, սա պայմանավորված էր ԽՍՀՄ Հանրապետության վարած ավելի զգուշ քաղաքականությամբ, սակայն որոշ քաղաքագետներ պնդում են, որ ճանաչումը հետևել է ադրբեջանցի ազգայնականների այն պնդումներին, թե Իրանը ընդգծմանում է Ադրբեջանի անկախությանը⁹: 1992 թ. Հունվարին Ադրբեջանի նախագահ Այյա Մուլախիբովը Բարեկամության պայմանագիր էր ստորագրել Թուրքիայի հետ¹⁰: Հարկ ենք համարում ընդգծել այն փաստը, որ առաջինը Բարեկամության պայմանագիր ստորագրվել էր Թուրքիայի եւ ոչ թե Իրանի հետ, որը եւ կրոնով, եւ աշխարհագրորեն ավելի մոտ էր Ադրբեջանին: Եվ Հարկավոր չէ մեծ երեւակայություն պատկերացնելու, թե ինչպիսի անդադարձ ունեցավ այդ պայմանագիրը տարածաշրջանային զարգացումների հետագա ընթացքի վրա: Անկասկած, Իրանի միջնորդության հաջողությունը կզույգեր պանթյուրքական տրամադրությունների տարածումը ոչ միայն Կովկասում, այլև Կենտրոնական Ասիայի երկրներում: Ընդհանրապես Իրանը շատ բացասական է գնահատում Թուրքիայի դերը տարածաշրջանում եւ, հետեւապես, դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում՝ որակելով այն որպես բացասական, կողմնապահ եւ տարածաշրջանային մյուս երկրների շահերը անտեսող¹¹:

Իրանը հետապնդում էր նաև Թուրքիային, տարածաշրջանում ԱՄՆ շահերի պաշտպանին, դարաբաղյան խնդրի հանգուցալուծումից զերծ պահելու նպատակը: Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղը ոչ մի դեպքում չէին ընդունի տարածաշրջանային այդ հակալի՛ Թուրքիայի միջնորդությունը Հայտնի պատճառներով, ինչպես նաև Թուրքիայի կողմնապահության պատճառով:

ԽՍՀՄ փլուզումից հետո առաջ եկավ Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցը, որը առափնյա երկրների միջև բավականին սուր հակասությունների պատճառ է հանդիսանում մինչ օրս: Միջնորդական առաքելության հաջողության դեպքում Իրանն իր ծանրակշիռ խոսքը կունենար տարածաշրջանային այդ եւ այլ զարգացումների ժամանակ:

Հետապնդելով վերջադարձայն նպատակները՝ 1992 թ. փետրվարին ԵԱՀԽ խաղաղարար նախաձեռնություններին զուգահեռ Բաքու եւ Երեւան այցելեց Իրանի արտգործնախարար Ալի Աբբաս Վելայեթին: Հայաստանի ղեկավարության հետ հանդիպումներից հետո նա իր ամսական արտահայտեց, որ չի կարող այցելել նաև Ստեփանակերտ¹²: Այս Հայտարարությունը վկայում է, որ Իրանն արդեն այն ժամանակ գիտակցում էր, որ առանց ԼՂՀ ներկայացուցիչների մասնկցության հաջողության հասնելը բավականին դժվար կլինի: Բաքվում Ադրբեջանի ղեկավարության հետ տեղի ունեցած բավականին արդյունավետ բանակցություններից հետո ինչպես Հայաստանը, այնպես էլ Ադրբեջանը ողջունեցին Իրանական նախաձեռնությունը: Վելայեթին իր հերթին Հայտարարեց, որ Իրանը շահագրգռված է Ադրբեջանի եւ Հայաստանի միջև բարեկամական հարաբերությունների հաստատման մեջ, եւ Իրանի նախաձեռնությունը ուղղված է դրան: Նա առաջ քաշեց քաղաքական, մշակութային եւ տնտեսական համագործակցության մի քանի գործնական ծրագիր: Ռուսաստանի հետ կապերի նվազման պատճառով ինչպես

Ադրբեջանի, այնպես էլ Հայաստանի տնտեսություններում արդեն անկում էր նկատվում: Ենչտը զննելով քաղաքական եւ տնտեսական համագործակցության վրա՝ Իրանը ցանկանում էր շահագրգռել երկու երկրներին՝ իր միջնորդական առաքելության հաջողության դեպքում սարանքաշրջանառության մեծացման, համատեղ ձեռնարկությունների ստեղծման հեռանկարով: Սակայն, ինչպես ցույց տվեց պատմությունը, այդ ամենը տեղի ունեցավ նաև Իրանական միջնորդական առաքելության անհաջողության պայմաններում: Իր Հյուսիսային Հարևանների անկախացմամբ Իրանի Համար նոր շուկաներ էին բացվում, արտահանելով իր արտադրանքը այդ երկրներ Իրանը բավականին շահույթաբեր վիճակում էր հայտնվելու:

Իր այցելությունը Բաքու եւ Երեւան Վելայեթին գնահատեց որպես երկու երկրների հետ համագործակցությանն ուղղված առաջին քայլ:

Պետք է նշել, որ դարաբաղյան հակամարտության պատմության մեջ Իրանական միջնորդական առաքելությունը ամենաշահեկան վիճակում էր գտնվում մի քանի պատճառով.

- 1992 թ. հակամարտող կողմերից ոչ մեկը չէր հասել ռազմական գերակշռության կամ չէր տարել որեւէ լուրջ հաղթանակ.
- հակամարտության կողմերը նախընտրում էին հարցի լուծման խաղաղ տարբերակը, չնայած այն հանգամանքին, որ հետապնդում էին հակադիր նպատակներ.
- մեծ պետությունները դեռևս ուղղակիորեն ընդգրկված չէին հակամարտության մեջ, եւ չկար շահերի այնպիսի բախում, ինչպիսին երեւան եկավ հետագայում:

Որպես փետրվարին ձեռք բերված պայմանավորվածությունների տրամաբանական շարունակություն՝ մարտի կեսերին Երեւան ժամանեց Իրանի փոխարտգործնախարար Մահմուդ Վալիդին, որը ներկայացրեց արդեն Բաքվի հակամարտությանը արժանացած իրանական առաջարկները, որոնցով նախատեսվում էր կրակի դադարեցումից անմիջապես հետո զինադադարի պահպանման հստակ մեխանիզմներ սահմանել, այն է՝ դիտորդների, այդ թվում է ԻԻՀ ներկայացուցիչների, տեղաբաշխում:

Հայաստանը, չտալով միանշանակ պատասխան սույն առաջարկություններին, Հայտարարեց, թե հակամարտության կարգավորման մեխանիզմը կգործի Ադրբեջանի եւ Ղարաբաղի միջև ձեռք բերված պայմանավորվածություններից հետո: Փաստորեն, Ղարաբաղը Հովանավորող պետությունը՝ հակամարտության կողմերից եւս մեկը, չմերժեց ներկայացված առաջարկությունները, որն արդեն հուսալից փաստ էր:

Իրանի նախաձեռնությունը բարձր գնահատականի արժանացավ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի կողմից: Մարտի 19-ին Իրանի արտգործնախարարին հղված նամակում ԻԻՀ միջնորդական առաքելությանը իր աջակցությունն էր Հայտնում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Դալին:

Իրանական առաջարկությունները բավականին կառուցողական տարրեր էին պարունակում. առաջին հերթին նախատեսվում էր մեկ շաբաթով զինադադար հաստատել, որին պետք է հետևեր ապաշրջանադարձ, գերինների փոխանակումը, իսկ կարգավորման վերջին փուլում պետք է բանակցություններ սկսվեին Հայաստանի եւ Ադրբեջանի միջև՝ Իրանի եւ Ռուսաստանի միջնորդությամբ: Ռուսաստանի՝ որպես տարածաշրջանային տերություն, ներգրավումը կարգավորման գործընթացում իրանական միջնորդության հաջողությանը նպաստող գրավականներից էր, սակայն կային նաև թերի կողմեր եւ նախաձեռնության անհաջողությանը նպաստող գործոններ:

ԼՂ իշխանությունները, ընդհանուր առմամբ, ընդունեցին Վելայեթի ներկայացրած առաջարկությունների փաթեթը, սակայն անհամաձայնություն հայտնեցին խաղաղ գործընթացում

նախատեսվող ԼՂ կարգավիճակի հետ: Իրանական առաջարկները նախատեսում էին, որ ԼՂ իշխանությունները բանակցություններին պետք է մասնակցեն որպես դիտորդ «ԼՂ ազդեցության համայնքի» ներկայացուցիչների հետ հավասար իրավունքներով: Այս առաջարկությունները, փաստորեն, ի սկզբանե թերի էին, քանի որ կանխորոշում էին ԼՂ կարգավիճակը: Հետագայում այս սխալը կրկին նաև ԵԱՀԿ-ն: Միգուցե նման տարբերակը կգործեր աշխարհի այլ մասում հակամարտության կարգավորման ժամանակ, սակայն ոչ Ղարաբաղի դեպքում: Կարելի է համաձայնել, որ ԼՂ չէր կարող ստանալ Հայաստանի կամ Ադրբեյջանի միջազգայնորեն ճանաչված պետությունների նման կարգավիճակ, սակայն Ղարաբաղի ադրբեյջանական համայնքին, որը գերակշռող փոքրամասնություն էր կազմում, նույն իրավունքներով օժտելը անսովոր անհեթեթ էր: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ ԼՂ իշխանությունները ընդունեցին մեկշաբաթյա հրադար հաստատելու մասին առաջարկությունը: Ի պատասխան Վայեզին խոստացավ Ադրբեյջանական իշխանություններին ներկայացնել ԼՂ որպես կարգավորման գործընթացի լիիրավ կողմ ճանաչելու անհրաժեշտության մասին փաստարկները:

Այսպիսի արդյունքներով Վայեզին մեկնեց Մոսկվա՝ Համաձայնեցնելու հակամարտության կարգավորման սկզբունքները ուսումնասիրելու հետ, քանի որ Ռուսաստանի մասնակցությունը կարգավորման գործընթացին ավելի ծանրակշիռ կդարձներ այն: Զիշտ է, նախաձեռնությունը պատկանում էր Իրանին, եւ Ռուսաստանում մտավախություն կար, որ միջնորդության հաջողության դեպքում դերերը կդասավորվեին հակառակ այնպես, ինչպես դասավորվեցին Ռուսաստանի եւ ԵԱՀԿ դերերը 1994 թ. կնքված զինադադարից հետո՝ Ռուսաստանը իրոք ստացավ խաղախարարի դասինները, իսկ ԵԱՀԿ դերը կտրուկ նվազեց:

Հակամարտության կողմերը Հայտարարեցին Իրանի միջնորդությամբ ձեռք բերված զինադադար հաստատելու մասին: Չնայած զինադադարի պարբերական խախտումներին՝ Համաձայն մշակված ծրագրի տեղի էին ունենում գերիների փոխանակումներ: Միգուցե փոխանակումները կնպաստեին զինադադարի եւ հակամարտության կողմերի միջև փոխադարձ վստահության ամրապնդմանը, սակայն դա տեղի չունեցավ:

Մոսկովյան Հանդիպումներից հետո Վայեզին Հայտարարեց, որ զինադադարը, որի երկարաձգման մասին նախնական պայմանավորվածություն էր ձեռք բերվել, պահպանվում է եւ արդեն համաձայնեցված է կողմերի հետ, իսկ Երեւանում Վայեզին ավելի հեռու գնաց՝ Հայտարարելով, թե Իրանական միջնորդության հաջողությունը արդեն երեւում է: Սակայն իրականում զինադադարը չէր պահպանվում, նույնիսկ ապրիլի 1-ից ադրբեյջանական կողմը սկսեց օդատարածել ծանր հրետանի: Դժվար թե Իրանի փոխարտգործնախարարը տեղյակ չէր այս ամենին, քանի որ զինադադարի պահպանմանը հետեւելու նպատակով Ստեփանակերտում էր գտնվում նրա խորհրդականը, որի ամենօրյա բողոքներից հետո դադարեցվում էր Ստեփանակերտի ուժեղացումը Շուշիից:

Այս գործընթացներին զուգահեռ երեւան եկավ Իրանի միջնորդական առաքելության ձախողման պատճառներից թերեւս ամենակարեւորը՝ հակամարտության կարգավորմամբ սկսեցին զբաղվել արեւմտյան պետությունները ի դեմս ԵԱՀԿ Մինսկի խմբի: Այսպիսով, միջնորդական առաքելությունները մրցակցություն մեջ մտան: Ըն ընդհանրապես Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման գործընթացում նկատվեց միջազգային հանրության ակտիվացում: Գրեթե Վայեզիի հետ միժամանակ տարածաշրջանում էր գտնվում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ, ԱՄՆ նախկին պետքարտուղար Սայրուս Վենսը, որը բարձր գնահատեց ԵԱՀԿ դերը հակամարտության կարգավորման միջազգային ջանքերի իրագործման ասպարեզում¹³: Այստեղ հատուկ երեւում է, որ ՄԱԿ-ը եւս նախապատվությունը տալիս էր ԵԱՀԿ նախաձեռնությունները, չնայած այն հանգամանքին, որ իրանական միջնորդությունը ավելի հեռու էր գնացել ու ավելի հեռանկարային էր այդ պահին, եւ իր Հայտարարությամբ Վենսը ՄԱԿ-ի անունից ավակցություն հայտնեց ԵԱՀԿ նախաձեռնությունները: Մարտի վերջին - ապրիլի սկզբին ԵԱՀԿ նախաձեռնության շրջանակներում հակամարտության կարգավորման գործընթացում այդ կազմակերպության առաջատար դերն ապահովելու եւ միաժամանակ իրանական միջնորդական առաքելության չեղարացման նպատակով տարածաշրջան այցելեցին միանգամից մի քանի բավականին բարձրաստիճան պատվիրակություններ:

Ապրիլի 10-ին ԼՂ-ն եւ Ադրբեյջանը իրանական կողմին ներկայացրեցին իրենց առաջարկները կարգավորման վերաբերյալ: Իրանի միջնորդական ջանքերը շարունակվեցին ողջ ապրիլի ընթացքում եւ որպես այդ ջանքերի շարունակություն մայիսի 8-ին Թեհրանում Իրանի նախագահ Ալի-Աքբար Հաեմեի Ռաֆսանջանին, Հայաստանի նախագահ եւ Ադրբեյջանի նախագահի պաշտոնակատար, խորհրդարանի նախագահ Յաղուբ Մամեդովը ստորագրեցին «Համատեղ Հայտարարություն», որում արտացոլվեցին կողմերի մտադրությունը՝ հակամարտության կարգավորմանը հասնել խաղաղ միջոցներով, միջազգային, այդ թվում ԵԱՀԿ, դիտորդներ տեղաբաշխել հակամարտության գոտում՝ կայուն խաղաղություն ապահովելու նպատակով: Խաղաղապահ նախաձեռնության մեջ ԵԱՀԿ դիտորդների ներգրավմանը Իրանը, ըստ երեւույթի, նպատակ ուներ հազուրդ տալ Մինսկի գործընթացի հեղինակների՝ տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներին անմասն չմնալու ցանկություններին, սակայն արդեն ամեն ինչ պատրաստ էր Իրանի միջնորդական առաքելության ձախողման համար:

Իրանական միջնորդական առաքելության ձախողման պատճառն ուսումնասիրողների մեծ մասը համարում են նույն օրը դարբասայան գործախախտումների կողմից Շուշիի ազատագրումը:

Նախեւումալ Թեհրանում Հայտարարության ստորագրման օրը ներկաներից բոլորն էլ քաջ տեղյակ էին Շուշին ազատագրելու զարբասայան բանակի նպատակներին: Ըստ ԼՂ նախագահի խորհրդական Մանվել Սարգսյանի¹⁴ (այն ժամանակ ՀՀ-ում ԼՂ մշտական ներկայացուցիչ), Շուշիի ազատագրման պատրաստությունները արվում էին մոտ երկու շաբաթ եւ ակնհայտ էր ուղիղ մական գործողությունների ծավալումը: Իրանի դիվանագետները, մի քանի անգամ լինելով Ստեփանակերտում, ակնատես են եղել, թե ինչպիսի վտանգ են իրենցից ներկայացնում Շուշիի կրակակետերը, եւ դրանց գոյության հանդուրժումը ինքնասպանության էր հավասար: Ըստ Ժիրայր Լիպարիտյանի, Շուշին ամեն դեպքում ազատագրվելու էր, եւ Հայաստանի իշխանությունները գնալու էին այդ քայլին, նույնիսկ միջազգային ճնշման պայմաններում, իսկ Մամեդովը Թեհրանում բարձր մակարդակի հանդիպման եւ փաստաթղթերի ստորագրման պահին արդեն գիտեր Շուշիի զարգացումների մասին, հետեւապես կարող էր հրաժարվել փաստաթղթերի ստորագրելուց¹⁵:

Առավել քան տարօրինակ էր Թեհրանյան Հայտարարությունը ստորագրողների վարքագիծը. ինչո՞ւ նրանք քաջ գիտակցելով, որ Հայտարարությունը ապագա չունի, այնուամենայնիվ ստորագրեցին: Հստակ էր, որ ԵԱՀԿ ՄՊ մեջ մտնող արտատարածաշրջանային երկրները ցանկանում էին իրենց ձեռքը վերցնել նախաձեռնությունը եւ իրենց ազդեցությունը տարածել հակամարտության գոտում: Ադրբեյջանի պարագայում ինչ-որ բան պարզ է, իշխանության էին գալիս թուրքամետ ուժերը եւ Թուրքիայի անմասն մնալը տարածաշրջանային այսպիսի կարե-

Լոր գործերին ամենեւին ձեռնտու չէր: Անհասկանալի էր Հայաստանի քաղաքականությունը, որը, փաստորեն, գիտակցաբար նպաստեց իրանական միջնորդության ձախողմանը:

Բավականին յուրահատուկ էր Ռուսաստանի դիրքորոշումը: Ռուսաստանը, արեւմտյան երկրների ազդեցության տարածումը տարածաշրջանում կանխելու համար, Իրանի հետ հիմնախնդրի շտապուշտ հանգուցալուծմանը հասնելու փոխարեն, ընդհակառակը, ոչ մի միջոց չձեռնարկեց իրանական նախաձեռնության ձախողմանը կանխելու նպատակով: Ըստ երեւութի, Ռուսաստանի այս վարքագիծը կապված էր այն ժամանակվա արտգործանախարար Անդրեյ Կոզիրեւի հետ կապվող արտաքին քաղաքականության մեջ ուղղված ժամանակաշրջանի հետ, երբ նախապատվություն էր տրվում արեւմտյան արժեքներին եւ որդեգրված էր արեւմտամետ կողմնորոշում: Իրանին բանակցային գործընթացից դուրս մղելուն ամենաակտիվ մասնակցությունը ունեցավ Ռուսաստանը, որը Թեհրանյան հանդիպման նախօրյակին հատուկ հայտարարությամբ ընդգծեց, որ Ռուսաստանը հավանում է մասնակցել Իրանում տեղի ունենալիք ԼՂ հարցով բոլոր բանակցություններին: Այս հանգամանքով էլ կարելի է բացատրել ՌԳ դեսպանի մասնակցությունը Թեհրանյան համաձայնագրի ստորագրմանը: Սակայն, ինչպես նշել ենք, Վալեդի մակույկային դիվանագիտության աշխարհագրության մեջ Մոսկվան եւս մտել էր:

Թեհրանի համաձայնագրի ձախողումից հետո, ռազմական գործողությունների ուժեղացման պայմաններում, Իրանը շարունակեց իր մակույկային դիվանագիտությունը: Չնայած իրանական նախաձեռնության ճակատագիրը արդեն կանխորոշված էր, սակայն իրանցիները չցանկացան հաշտվել այդ մտքի հետ, եւ մայիսի 12-ին կրկին Երեւան ժամանեց Իրանի փոխարտգործնախարար Վալեդին, որը հայտատարեց, թե Շուշիի ազատագրման եւ Թեհրանում տեղի ունեցած բարձր մակարդակի հանդիպման գուղադիպությունը դժվարացնում է բանակցությունները, սակայն Իրանը լիահույս է հաջողության հասնելու գործում¹⁶: Իրանական միջնորդական ջանքերին վիճակված չէր հաջողության հասնել: Իրանի միջնորդական գործունեության ճանապարհին առաջ էին եկել ծանրակշիռ խոչընդոտներ, որոնք նա չկարողացավ կամ էլ չցանկացավ հաղթահարել:

Արդեն մայիսին Ադրբեջանում իշխանության եկավ Ազգային ճակատը՝ Աբուլֆազ Էլչիբեյի գլխավորությամբ, որը հայտնի էր իր թրջամետությամբ: Նա միանգամից մերժեց Իրանի միջնորդությունը եւ չեղարկեց հիմնախնդրի լուծման ռազմական ուղու վրա: Սակայն Էլչիբեյի այս որոշմանը, անկասկած, նպաստեց նաեւ ԵԱՀԽ ակտիվացումը հակամարտության կարգավորման բնագավառում եւ Իրանին տարածաշրջանային զարգացումներից զերծ պահելու ԱՄՆ քաղաքականությունը:

Ադրբեջանի ազգայնական կառավարության եւ Իրանի հարաբերությունների վատացման հետ միաժամանակ բավականին լավ հարաբերություններ էին ստեղծվել Իրանի ղեկավարության եւ Նախիջևանի ինքնավար հանրապետության ղեկավար Հեյդար Ալիևի միջև: Նախիջևանի Իրանը Ֆինանսական, Նյութական եւ Հումանիտար օժանդակություն էր ցույց տալիս, նույնիսկ տեղեկություններ էին տարածվում, որ Նախիջևանում տեղեկյված են Իրանի էլիտար «Իսլամական հեղափոխության պահապաններ» գործախմբի ջոկատները¹⁷:

1992 թ. ամռանը, ԵԱՀԽ շրջանակներում Հռոմում ընթացող բանակցությունների անարդյունավետության եւ ադրբեջանական հարձակման ծավալման պայմաններում, Հայաստանի եւ Նախիջևանի սահմանազերծում իրավիճակի վատթարացման ժամանակաշրջանում Հայաստանի ղեկավարությունը դիմեց Իրանին ակտիվացնելու իր գործունեությունը Թեհրանի համաձայնությունների հիման վրա, մասնավորապես Հայաստանի եւ Նա-

խիջևանի սահմանում իրավիճակի կայունացման նպատակով: Իրանի իր պատրաստակամությունը հայտնեց գիտորդներ ուղարկել այնտեղ՝ իրավիճակի անաչառ գնահատման եւ վերահսկողության համար: Իրանի պատասխանը ստանալուն պես՝ ՀՀ նախագահի ազգային անվտանգության հարցերով գլխավոր խորհրդական Աշոտ Մանուչարյանը, ակնարկելով ԵԱՀԽ ՄԽ երկրներին, հայտարարեց, որ Հայաստանը չի առարկում միջնորդական գործունեության մեջ այն երկրների մասնակցությանը, որոնք վերջին ժամանակաշրջանում դրսևորեցին իրենց անաչառ եւ անկողմնապահ դիրքորոշումը զարաբաղյան հիմնախնդրի հանդեպ՝ պայմանով, որ այդ երկրների մասնակցությանը դիմ չեն լինի Իրանն ու Ադրբեջանը: Այս հայտարարությունը Մանուչարյանն ազգարարեց, որ ԵԱՀԽ ակտիվ մասնակցությունը հակամարտության կարգավորման գործընթացում անդառնելի է:

Արդեն խոսել ենք իրանական միջնորդական ձախողման հիմնական պատճառների մասին, սակայն, մեր համոզմամբ, գոյություն ունի եւս մեկ պատճառ, որի մասին անհրաժեշտ ենք համարում խոսել: Թեհրանի հանդիպմանը ներկա գտնվելու հրավեր չէր ուղարկվել ԼՂ ղեկավարությանը: Սա թերեւս բավականին տարօրինակ էր, քանի որ նախնական բանակցությունները վարվում էին նաեւ ԼՂ իշխանությունների հետ եւ միգրացիոն ԼՂ իշխանությունների ներկա գտնվելը կհետաձգեր Շուշիի գործողությունը գոնե մի քանի օրով, եւ Իրանը չէր հայտնվի նման ոչ նախնաձեռնի կացության մեջ: Առավել եւս, որ արդեն սկսվել էր Մինսկի գործընթացը, որտեղ ԼՂ ներկայությունը զուտ ղեկավարտիվ բնույթ էր կրում, իսկ Թեհրանի հանդիպման ժամանակ ԼՂ ներկայացուցչի ներկայությունը գոնե բարոյապես կխոչընդոտեր ԼՂ բանակի հարձակումը:

Իրանցիները, կնքելով համաձայնագիր ամենաբարձր մակարդակի վրա, միգրացի, հույս ունեին, որ ՀՀ նախագահը կազդի նաեւ ԼՂ իշխանությունների վրա, եւ նրա մասնակցությունը Թեհրանյան հանդիպմանը կզսպի զարաբաղյան գործախմբությունների հարձակումը:

Ինչեւէ, իրանական միջնորդական առաքելությունը, որը բավականին մեծ հնարավորություններ ուներ հաջողության հասնելու, ձախողվեց վերը նշված օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով, իսկ Իրանը ստիպված էր հակամարտության կարգավորման գործընթացում իր տեղը գիջել այլ երկրների: ՀՀ-ում ԻԻՀ դիվանագետի հետ գրույցի ժամանակ նա նշեց, որ Իրանը քայլեց ժամանակի հետ համահունչ՝ դիտակցելով, որ միեւնույն է, առանց Իրանի մասնակցության անհնար է հակամարտության համապարփակ կարգավորումը եւ ուշ թե շուտ ՄԽ կղիմի Իրանին արևկցության խնդրանքով¹⁸: Իրանի լավատեսությունը ապարդյուն չէր, քանի որ 2001 թ. ապրիլին ՀՀ եւ Ադրբեջանի նախագահների միջև ԱՄՆ-ում կայացած բանակցություններից հետո, ԱՄՆ ներկայացուցիչը հայտարարեց, որ անհրաժեշտ է Իրանի մասնակցությունը բանակցային գործընթացին¹⁹:

Մեր կողմից ավելացնենք, որ, իրոք, տարածաշրջանային երկրների մասնակցությունը հանդիսանում է կարգավորման այնպիսի նախապայման, ինչպիսի նախապայման է հակամարտության բոլոր կողմերի մասնակցությունը:

Այսպիսով, ուսումնասիրելով Իրանի միջնորդական գործունեությունը զարաբաղյան հակամարտության կարգավորման սկզբնական փուլում կարելի է եզրակացնել, որ այն ուներ հաջողության հասնելու որոշակի ներուժ, սակայն, արտատարածաշրջանային երկրների ցանկությունը՝ ներգրավվելու իրենց համար նոր շուկա հանդիսացող կապիտալիստ տարածաշրջանում, ինչպես նաեւ Ռուսաստանի ոչ միանշանակ դիրքորոշումը հանգեցրեցին հիմնախնդրի լուծման գործընթացից Իրանի դուրս մղմանը, ինչը, մեր կարծիքով, բացասաբար անդրադարձավ կարգավորման գործընթացի վրա:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 1993 թ. ապրիլին դարաբաղյան գործադիրությունների կողմից Քելբաջարի շրջանի գրավումից հետո Թեհրանի տարբեր համալսարանների ուսանողներ Թեհրանում ՀՀ ղեկավարության առջև ցույց էին կազմակերպել, որտեղ պահանջեցին անմիջապես դուրս բերել գործադիրությունները զբաղեցրած տարածքներից, ինչպես նաև դիմեցին Իրանի իշխանություններին՝ Ադրբեջանին ուղղակի ազգական օգնություն ցույց տալու պահանջով (Resalat, 14 April 1993):
2. Abdollah Ramezanzadeh. Contested Borders in the Caucasus, by Bruno Coppieters (ed.), VUB University Press (Internet version), 1996, p. 4; 3. Ibid, p. 4.
4. Interview with M. Vaezi, the Iranian Deputy Foreign Minister for European and American Affairs and Iran's special envoy for mediating in the crisis in Nagorno-Karabakh, Keyhan, 21 May 1992.
5. Ali Akbar Velayati's speech at the conference on "The Transformation of the Former Soviet Union: Implications for the Third World", Tehran, 10-12 March 1992.
6. Ռ.Ւ ԱԳև Դիվանագիտական Ակադեմիայի պրոֆեսոր Ա.Կինի դասախոսություններից:
7. <http://www.unhcr.org/> ՄԱԿ-ի փախստականների գծով գերազույն հանձնակատարի գրասենյակի տվյալների համաձայն, 1999 թ. Իրանում ապաստան գտած փախստականների թիվը կազմում էր մոտ 2 միլիոնից ավել մարդ:
8. Defense News, 16.12.1991.
9. Moorad Mooradian. Third party mediations and missed opportunities in Nagorno-Karabakh: A Design for possible Solution. George Mason University, Virginia, USA, 1996, p. 346; 10. Ibid, p. 347.
11. ՀՀ-ում ԻԻՀ ղեկավարության քաղաքական բաժնի փորձագետ Մ.Հաչեմիի հետ զրույցի գրառում, 18.06.2001թ.:
12. Ар.мения: Проб.леме независимого развития. РИСИ. М., 1998, с. 402.
13. Moorad Mooradian. Third party..., p. 339; 14. Մանվել Սարգսյանի հետ զրույցի գրառում, 27.07.2001 թ.:
15. Փիրայր Լիպարիտյանի հետ հեղինակի նամակազրույցում, 08.08.2001 թ.:
16. «Հայաստանի Հանրապետություն», 13.05.1992 թ.:
17. Ар.мения: Проб.леме Независимого развития, с. 408.
18. ՀՀ-ում ԻԻՀ ղեկավարության քաղաքական բաժնի փորձագետ Մ.Հաչեմիի հետ զրույցի գրառում, 18.06.2001թ.:
19. Արմենպրես, 11.04.2001 թ.:

Գեներտիկ ընդհանրություն հրեաների եւ քրդերի միջև

Ըստ հրեական «Հաբեց» քերթի (նոյեմբերի 21, 2001 թ.), Երուսաղեմի Հրեական համալսարանի պրոֆ. Արիելա Օպպենհեյմերը եւ դր. Մարինա Ֆրեյմանը՝ մարդաբանական հետազոտության (Y քրոմոսոմի մուտացիաների ուսումնասիրության) արդյունքում հայտնաբերել են, որ քրդերը գեներտիկորեն ավելի մոտ են հրեաներին, քան իրենց հարեան արաբներին:

Ցավոք, չի նշվում, թե քրդերի ո՞ր մասն է ուսումնասիրվել. գուցե խոսքը քրդական հրեաների՝ այսպես կոչված Kurdish-Jews, մասին է: Այդ դեպքում, իհարկե, զարմանալու բան չկա:

Հրեա մարդաբանների կարծիքով, ինչպես նշում է քերթը, քրդերի եւ հրեաների նախահայրենիքը հյուսիսային Իրաքի տարածքն է, որտեղից երկու ժողովուրդների նախնիները նախապատմական ժամանակաշրջանում գաղթել են տարբեր ուղղություններով:

Ընդհանրապես, քրդեր կոչվող ցեղային կոնգլոմերատը երբեք միատարր չի եղել. այն, ըստ էության, տարբեր մարդաբանական տիպերի խառնուրդ է: Այնպես որ որեւէ եզրակացության գալուց առաջ պետք է պարզել, թե քուրդ կոչվող էթնիկ զանգվածի ո՞ր մասն է ի նկատի առնվել հիշյալ հետազոտության ընթացքում:

ԷՄԻՆ ԱՎԿՈՐՅԱՆԻ ՎԻՇԱՏԱԿԻՆ

Ամեն ընտանիք օջախ է իր սոհմածառին քաջատեղյակ, թոռներից յուրաքանչյուրի ծնունդն ու թոթովանքը սրտի Հիշողության մեջ պահող ավագներով: մեծ պապ ու տատերով: Իսկ յուրաքանչյուր համայնք հանրույթ է իր պատմության, նրա հոգեւոր կյանքի ու մշակույթի ոլորանները դեպք առ դեպք անցած, այդ համայնքի երեւելիների վաստակի բերած լույսը իր Հիշողության ծալքերում պահող, նրանց գործունեության մոռացության մատնվող էջերի նշխարները երկյուղածությամբ պահպանող ավագներով: Ծիշտ այդպիսին էր օրերս կյանքից հեռացած Իրանի Ատրպատականի Հայոց թեմական խորհրդի առենապետ էմիլ Հակոբյանը: Իր ունեցած ճարտարագետ, զննարկող կոչումներից նրան ամենից ավելի արժանավորւյնս վաղելում էր մտավորականի կոչումը: Էմիլ Հակոբյանը մտավորական էր իր ամբողջ էությանը՝ պահպանողով, Հայրենի եւ Իրանահայ հոգեւոր արժեքների հանրագիտարանային իմացությամբ եւ դրանց հանդեպ գուրգուրալից վերաբերմունքով: Պետք էր տեսնել, թե կատարված պարտքի պատճառած ինչ անսթող ուրախությամբ էր նա Հայրենիքում որեւէ հրատարակչության կամ պարբերականի պատասխանատուներին հանձնում Հայոց պատմա-մշակութային կամ Իրանահայ համայնքին առնչվող որեւէ վավերագիր, անհայտ նյութ:

Այդ ուրախությունը "Իրան-նամէի" խմբագրակազմը ականատես է եղել քանիցս՝ իր ճշմարիտ բարեկամի ուրախությունը երկրորդելով դրանք հանդեսի համարներում հրատարակվելով: Թավրիզում վերջին հանդիպման ժամանակ խոստանում էր Հայաստան գալ, նոր ծրագրեր ունեն, որոնց վիճակված էր իրականանալ:

Բազում խնկարկում անբասիր մարդու, լուսամիտ Հայրենասերի նրա Հիշատակին:

ԽՄԲ.